



ՍՈՒՐԲ ԵՐՐՈՒԴՈՒԹԻՒՆՆ ԿԱՅԿԱՏԻՆԵԱՆՅՅ ԵԿԵՂԵՅԻ
HOLY TRINITY ARMENIAN CHURCH

His Eminence Archbishop Torkom Manoogian
Primate of the Eastern Diocese
Armenian Church of America
630 Second Avenue
New York, N.Y. 10016

PARISH OFFICE 924-6514
AUDITORIUM 923-0081

Արքեպիսկոպոս Յեզր 8/1982

December 24, 1981

Your Eminence:

The Parish Council is pleased to bring the following to your attention for your consideration:

A special parish assembly was convened on Sunday, November 30, 1981, for the purpose of deliberating and voting on the following issues:

1. Approval of the new church plans
2. Canadian Diocese
3. Permanent parish priest

Parish council proposals were presented on the above items and were put to vote at the assembly. The minutes of that assembly are herewith attached for your perusal including the results of the voting process. The preceding items were adopted as resolutions by the special assembly of Holy Trinity Armenian Church:

1. Approval of the church plans as presented, including the overall cost estimate as described in the minutes.
2. Adoption of a parish council proposal to postpone the establishment of the Canadian diocese during the construction phase of our new church to avoid undue financial strain on the parish.
3. Adoption of a parish council proposal to recommend the appointment of Very Rev. Fr. Jirayr Tashjian as pastor to our church during the construction phase to help with the fund-raising efforts.

The minutes of the assembly enclosed clearly outline the details of the assembly in accordance with the By-laws of the Eastern Diocese. The Parish Council submits the preceding items for approval by the Primate and the Diocesan Council; as well as the Board of Trustees in the case of the church plans.

In anticipation, we remain faithfully yours,

T. Zabunyan
p/T. Zabunyan
Secretary

S. Tchilingirian
S. Tchilingirian
Chairman

Ապրիլի 8/82
P



ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՆԱՅԱՏԱԿՆԵԿՅՈՒ ԵԿԵՂԵՑԻ
HOLY TRINITY ARMENIAN CHURCH

PARISH OFFICE 924-6514
AUDITORIUM 923-0081

Ս.ԵՐՐՈՐԴ. ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՈՐ ԺՈՂՈՎ

Ս.Երրորդ. Հայց. Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի հրաւերով, նոյեմբեր 15, 1981
կիրակի օր ժամը 3:30-ին կատարուեցաւ ընդհանուր Անդամական մասնաւոր ժողովը:

Ժողովին ներկայացան 98 տրատու անդամներ, անդամներու գումարը ժամը 4-ին
հասաւ 128-ի:

Մասնաւոր ժողովը սկսաւ վարդան Քհնյ. ճանկիւլեանի բացման աղօթքով:

Ծխական Խորհուրդի Ատենապետ Պրն. Սարգիս Զիլինկիրեան կանոնադրութեան 15-րդ
յօդուածին համաձայն, ներկայ տրատու անդամներու թիւը բաւական գտնելով
ժողովը օրինական հռչակեց:

Մասնաւոր ժողովի օրակարգը կը բաղկանար երեք նիւթերէ.-

- ա- Ս.Երրորդ. Հայց. Եկեղեցւոյ շինութեան ծրագիրը:
- բ- Գանատայի թեմ
- գ- Մնայուն հովիւ

Ատենապետ Պրն. Ս. Զիլինկիրեան ժողովականներուն բարեգալուստ մաղթելէ վերջ
սկսաւ օրակարգի առաջին նիւթին: Տեղեկութիւն տուաւ ծխական Խորհուրդի տարած
աշխատանքներուն մասին, յիշելով նաեւ կազմութիւնը զանազան յանձնախումբերու,
որոնք են.- Դրամախոյզ Յանձնախումբ, Շինութեան Յանձնախումբ եւ Անդամարշաւի
Յանձնախումբերը, որոնք կարճ ժամանակամիջոցի մը մէջ կրցան կազմակերպուիլ իրենց
պաշտօնը լաւագոյն ձեւով կատարելու նպատակով:

Ատենապետը հրաւիրեց Պրն. Պարզեւ Խոճաճեանը իբր Շինութեան Յանձնախումբի
Ատենապետ:

Պրն. Պ. Խոճաճեան: Օրինական գետնի վրայի ձեւակերպութիւնները շատ մօտ թուականի
մէջ պիտի լրանայ, Քաղաքապետարանի հողի քաժանման համար սպասուած վաւերա-
ց ումը կարճ ժամանակէ մեզի պիտի հասնի, նոյնպէս նաեւ Սքարպօրօի բաղաբական

ժողովը եկեղեցւոյ յատկագիծը վաւերագուցած է, կը սպասենք իրենց վերջնական վաւերացման: Եկեղեցւոյ շինութիւնը կարելի պիտի ըլլայ սկսիլ 1982 զարնան, Առաջնորդ Սրբազան Հօր եւ Թեմական Խորհուրդի վաւերացումէն վերջ; Շինութեան Ցանձնախումբի եւ ճարտարապետի հաշիւներով, Եկեղեցւոյ Շինութեան ծախսը պիտի հասնի մօտաւորապէս 2.5 միլիոն տոլարի, այս թուանշանին մէջ ներքին կահ եւ կարասիներու ծախսերը չեն յիշուած: Եթէ շինութեան ծրագիրը զանազան պատճառներով ուշանայ վերոյիշեալ թուանշանը կրնայ բարձրանալ օրուայ գիններու աւելման համեմատութեամբ: Այս 2.5 միլիոննոց ծախսը կրնանք զանազան ճամբաներով նուազեցնել, օրինակ:-

- ա- նախ կարելի է միայն եկեղեցին կառուցել եւ մանրամասնութիւնները յետաձգել
- բ- Սրահը պզտիկցնել եւ սրահին շինութեան ծախսէն խնայել որոշ գումար մը:

վերոյիշեալ խնայողական ճամբաներով կարելի է խնայել մօտաւորապէս 400 հազար տոլար: Դրամախոյզ յանձնախումբի աշխատանքներու ձեւը մեծ ազդեցութիւն կը կրէ այս ծրագրին իրականագործման; ունինք մէկ միլիոնի չափ կալուած մը,

- ա) Պապայեան հաստատութեան կողմէ եկեղեցւոյ տեղափոխման համար մասնաւոր գումար մը յատկացուած է բարձր տոկոսով, որ այսօր հասած է մօտաւորապէս կէս միլիոն տոլարի: Եւ եթէ Թեմական Խորհուրդը ներկայ եկեղեցւոյ ծախուելու հրամանը մեզի շնորհէ, պիտի ունենանք մօտաւորապէս կէս միլիոն տոլար մը եւս որ ամբողջ գումարը պիտի հասնի մօտ մէկ միլիոն տոլարի: Դրամախոյզ յանձնախումբի աշխատանքները ինչպէս յիշուեցաւ շատ կարեւոր է, այն անձերը որոնք նուիրատուութիւն կը խոստանան, պէտք է իրենց խոստումները իրականացնեն առնուազն մէկ ու կէս տարուայ մէջ, այս ձեւով ժողովուրդէն կը սպասուի մօտաւորապէս 1.5 միլիոն տոլար:

Ատենապետ Պրն. Ս. Զիլինկիրեան շնորհակալութիւն յայտնեց Պրն. Պ. Խոճաճեանին եւ յետոյ հրաւիրեց ճարտարապետ Պրն. Թագլոր Յոբեանը: Պրն. Թ. Յոբեան, իր պատրաստած եկեղեցւոյ յատկագիծերուն վրայ ներկաներուն մանրամասն տեղեկութիւններ տուաւ, այս ծրագրին կենսական կարեւորութիւններուն վրայ շեշտելով ըսաւ թէ՛ երկու հայ կազմակերպութիւնները, որ այս ծրագրով քով քովի պիտի ապրին, պիտի միացնէ նաեւ հայ երիտասարդ սերունդը նոյն հողամասին վրայ: Պրն. Թ. Յոբեան շարունակելով ըսաւ թէ հողամասին վար ու վերի ձեւով ըլլալը մեզի համար հողափորութեան ծախսը նուազեցուցած է եւ այս ալ նկատի առնուելիք կէտ մը ըլլալով կրնանք սերտել:

Ատենապետ Պրն. Ս. Զիլինկիրեան շնորհակալութիւն յայտնեց Պրն. Թ. Յոբեանին եւ անդամներ հրաւիրեց որպէսզի հարցումներ եւ կամ լուսաբանութիւններ ուղղեն Պրն. Յոբեանին եւ Պրն. Խոճաճեանին:

Պրն. Թօզմանսեան: Եկեղեցին քանի հոգի կրնայ պարունակել:
 Պրն. Յոբեան: Եկեղեցին ինքը 373 , իսկ վերնատունը 270 հոգի ամբողջ գումարը 643 հոգի նստած:

Պրն. Հայկ Սէլեան: Թելադրանք մը. Գրադարանը բոլորովին քաց է արդեօք աւելի յարմար չէր ըլլար եթէ սենեակի ձեւով ըլլար:

Տիկին Հ. Ունճեան: Խոհանոցին մեծութիւնը որքան է:

Պրն. Թ. Յորեան: Ներկայ եկեղեցւոյ խոհանոցին զրեթէ մէկ ու կէս անգամն է:

Պրն. Թ. Յորեան ներկայ եւ ապագայ եկեղեցիներու սենեակներու եւ սրահներու բաղադատութիւնը ներկայացուց ժողովին:

Պրն. Գ. Էլմասեան: Կարասիներու եւ ներքին զարդարման համար ծախսը որքան պիտի ըլլայ:

Պրն. Պ. Խոճաճեան: 250 հազարի եւ 500 հազարի միջեւ, այս տեսակ կարասիներու գնումները կրնանք մաս մաս ընել եւ յետոյ նուիրատուներ գտնել որոնք կ'ուխտեն նուիրել, եկեղեցւոյս նստարաններէն մի քանին:

Պրն. Սեմ Օրջանեան: Եկեղեցւոյս անդամներուն մեծամասնութիւնը միեւնոյն ժամանակ Հ.Բ.Ը.Միութեան ալ անդամ են, կը խորհիք որ ~~որ~~ եկած խոստումները դիւրիւթեամբ պիտի կրնանք հաւաքել:

Ատենապետ Պրն. Ս^Ծ Զիլինկիրեան: Ինչպէս յիշուեցաւ դրամախոյզ յանձնախումբը իրենց աշխատանքը կը տանի, ծխական խորհուրդը կը հաւատայ որ գաղութը այս մեծ ծրագրին իր մասնակցութիւնը պիտի բերէ, նոյնպէս նաեւ նոյ. 30:1981-ին Երկուշաբթի օր պիտի հրաւիրենք գաղութէ անձեր պարզելու համար մեր ծրագիրը, որոնցմէ կը սպասենք կոկիկ գումար մը, այս պիտի ըլլայ առաջին քայլը մեր հանգանակութեան աշխատանքներուն:

Պրն. Վ. Վարդանեան: Կը հաւատա՞ք թէ այս տեսակ գումար մը պիտի կրնաք հաւաքել գաղութէն եւ վստա՞հ էք որ 2.5 միլիոնի կարելի պիտի ըլլայ այս ծրագիրը ամբողջացնել:

Ատենապետ Պրն. Ս. Զիլինկիրեան: Հաւատքն ու ուժն է որ մենք ձեզմէ կը սպասենք եւ վստահ ենք որ պիտի կրնանք գլուխ հանել այս ծրագիրը:

Պրն. Ե. Տէօվլէթեան: Վերը Աստուած կայ եկեղեցիի մը շինութիւնը կէս չի մնար:

Պրն. Գ. Էլմասեան եւ Վարդան Վարդանեան, այն հարցումները հարցուցին որ Պրն. Սեմ Օրջանեան հարցուցած էր եւ ատենապետի կողմէ նոյն ձեւով պատասխանուեցան:

Պրն. նՈւրհան Գարան: Առաջնորդ Սրբազան Հօր եւ Թեմական խորհուրդի հրամանը ունի՞ք որ այս ներկայ եկեղեցին ծախուի:

Պրն. Ս. Զիլինկիրեան: Ներկայ ծխական խորհուրդը կը հնազանդի Առաջնորդ Սրբազան Հօր եւ Թեմական խորհուրդի որոշումներու, մենք, օրինական ձեւով պիտի դիմենք սրբազան հօր եւ Թեմական խորհուրդին որպէսզի արտօնութիւնը շնորհէն այս տեսակ կարգադրութիւն մը տեղի ունենալու համար:

նՈւրհան Գարան: Աւագ խորանին ձեւին մասին կրնաք բացատրութիւն մը տալ, սանդուխ կայ թէ ոչ:

Պրն. Թազուոր Յորեան: Ծրագրին մէջ սանդուխ կայ քայց կարելի է փոփոխութեան ենթարկել:

Պրն. Գ. Էլմասեան: Բարբինկի համար բաւականաչափ տեղ ունինք: Ատենապետ Պրն. Ս. Զիլինկիրեան: Բարբինկի գործածութիւնը օրինական ձեւով պիտի կարգադրուի: Հ.Բ.Ը.Մ. եւ Ս. Երրորդ. Հայց. Եկեղեցւոյ վարչութիւնները որոշումի հասած են եւ այս որոշումը գրաւոր փաստեր ըլլալով պիտի պահուի մեր տոմարներուն մէջ, Բարբինկը որ կը պարունակէ 171 ինքնաշարժի տեղ պիտի գործածուի երկու կազմակերպութիւններու կողմէ հաւասարապէս:

Պրն. Հրանդ Պարտազճեան: Բարբինկը որ կը պարունակէ 171 ինքնաշարժի տեղ, եթէ որեւէ ձեւով բաւարար չըլլայ կարելի է 50 Տոլար վարձքով վարձել մօտակայ Սէնթէնյըլ քոլէճի բարբինկը որ 400 ինքնաշարժի տեղ ունի:

Պրն. Ժամկոչեան: Այս մաքէթը որ պատրաստուած է եկեղեցւոյ տեսքը էջմիածնական չէ, ինչո՞ւ համար:

Պրն. Թ. Յոբեան: 20րդ դարու ճարտարապետութիւն մըն է, իր մէջը ունի թէ էջմիածնական եկեղեցւոյ ոգի եւ նաեւ 20րդ դարու եկեղեցւոյ շինութեան ոգի ինքզնքիս գոհացում տալու նպատակով, Մայր Հայաստան ճամբորդեցի եւ այս ծրագրին համար տեսակցեցայ զանազան հայ ճարտարապետներու հետ:

Պրն. Նուրհան Գարան: Մէյնթէնընսի ծախսը որքան պիտի ըլլայ:
Պրն. Պ. Խոճաճեան: Մօտաւորապէս 140 հազար տոլար, երեք տեղի համար զատ տաքութեան ձեւեր ունինք այս ձեւով պիտի կարենանք տաքութեան ծախսը նուազեցնել:

Պրն. Վ. Վարդանեան: Ըսուեցաւ որ շէնքի ծախսը 2.5 միլիոն տոլար է, շէնքին համար 55 Տոլար ոտք գլուխ իսկ 100 Տոլար ալ եկեղեցւոյ շինութեան ոտք գլուխ հաշուած է, որքան միշտ է:

Պրն. Պ. Խոճաճեան: Մեր հաշիւները միայն այս օրուայ զինքերու վրայ յենուած է, շինութեան սկսուած ատեն, այս հաշիւները պիտի վերատեսուի օրուայ հրապարակի զինով:

Ատենապետ Ս. Զիլինկիրեան հարցում եւ թելադրութիւններուն վերջ տալով ծխական Խորհուրդի առաջարկը բերաւ այս անդամական մասնաւոր ժողովին:

Ծխական Խորհուրդի առաջարկ: Ընդունիլ ծխական Խորհուրդի ներկայացուցած նոր եկեղեցւոյ ծրագիրը, յիշուած ծախսի գումարը որ մօտաւորապէս 2.5 միլիոն տոլար է, լիազօրութիւն տրուի; այս մասնաւոր ժողովէն, ներկայ ծխական Խորհուրդին, որպէսզի ան, իրականացման աշխատանքը յառաջ տանի:

Տիկին Արաքս Գարան առեջարկեց որ բաց քուէարկութեամբ ըլլայ այս առաջարկի որոշումը, որը երկրորդուեցաւ Պրն. Տէօվլէթեանի կողմէ: Բաց քուէարկութեան արդիւնք ծխական Խորհուրդի առաջարկը ընդունուեցաւ 108 այո եւ 0 ոչ քուէով:

ԳԱՆԱՏԱՅԻ ԹԵՄ:

Օրակարգի Բ. նիւթ կազմող Գանատայի զատ Թեմի աշխատանքներու մասին Ատենապետ Պրն. Ս. Զիլինկիրեան ժողովականներուն պատշաճ տեղեկութիւններ տուաւ: 21 Փետրուար 1981 թուականին Թորոնթոյի Ս. Երրորդ. Եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի եւ Թեմական Խորհուրդի, ատենապետներու մասնակցութեամբ կատարուած ժողովին որոշումով կազմուած յանձնախումբի աշխատանքներու մասին ալ տեղեկութիւններ տալէ ետք, ըսաւ թէ զատ Թեմի համար, նախատեսուած էր 125 հազար Տոլարնոց դրամազուլիս մը, այս դրամազուլիսը կարելի պիտի ըլլայ ունենալ եթէ Մոնթրէալ, Ս. Խաչ եւ Ս. Երրորդ. Եկեղեցիները մասնակցին մօտաւորապէս 20 հազար տոլարով, իսկ Ս. Գաթրինգ, Համիլթըն եւ Վէն քուլըրի ծուխերը պիտի մասնակցին աւելի քիչ գումարներով, այս ձեւով կարելի է սպասել մօտաւորապէս 60-65 հազար տոլարնոց բաց մը, այս բացը արդեօք կարելի պիտի ըլլայ գոցել, մեզի

համար անորոշ է որովհետեւ կարգ մը ծուխեր, նիւ Եորքի Առաջնորդարանի իրենց անդամական տուրքերը իսկ տակաւին չեն վճարած: Ս. Երրորդ. Հայց. Եկեղեցին ունի հսկայ ծրագիր մը, ուստի իբր ծխական խորհուրդի առաջարկ, կուզենք առաջարկել այս անդամական ժողովին.-

✓ ծխական խորհուրդը կառաջարկէ յետաձգել տալ Գանատական Թեմի հարցը մինչեւ նոր Եկեղեցւոյ ծրագիրը եւ շինութիւնը աւարտի:

Ծխական խորհուրդի այս առաջարկը երկրորդուեցաւ Պրն. Գ. Էլմասեանի կողմէ: Անդամներու կողմէ այս նիւթին շուրջ հետեւեալ հարցումները եկան, Պրն. Սէմէրճեան: Այս առաջարկը միայն Ս. Երրորդ. Եկեղեցւոյ ծխական խորհուրդի առաջարկն է, ապա Գանատական բոլոր ծուխերն ալ նոյն ձեւով կը խորհին:

Ատենապետ Պրն. Ս. Զիլինկիրեան: Միայն մեր առաջարկն է, բայց ամէն ծուխ, առաջնորդարանի մը ծախսին մասին մտահոգուած է:

Պրն. Մինաս Սէլեան: Ս. Խաչ Եկեղեցւոյ վիճակը ինչ է, կիճախանք թէ անոնք տակաւին նիւ Եորքի Առաջնորդարանի տուրքը չեն վճարած:

Պրն. Ս. Զիլինկիրեան: Այս հարցը Ս. Խաչ Եկեղեցւոյ կը պատկանի:
Պրն. Կարօ Մարթին: Դրամագլուխի մասին տրուած թուականները ճիշտ չի երեւար:

Ատենապետ Պրն. Ս. Զիլինկիրեան: Մենք, մեզի տրուած տուեալներու հենեւով հաշուեցինք:

Պրն. Պ. Խոճաճեան: Դրամագլուխի բացը գոցելու դժուարութիւնը կարեւոր է եթէ Գանատական Թեմի պատկանող ծուխ մը իր բաժինը չի վճարէ, այս բաժինը ով կրնայ գոցել կամ վճարել, այս կէտն ալ պէտք է նկատի ունենալ:

Պրն. Հայկ Միսաբեան: Ծխական խորհուրդի այս առաջարկը վեհափառ Հայրապետին կոնդակին հակառակ է եւ կուզեմ այս խօսքերս արձանագրուի ատենագրութեան մէջ:

Պրն. Մարտիկ Փափագեան: Վեհափառ Հայրապետին Կոնդակին պէտք է հնազանդինք: Ատենապետ; Պրն. Ս. Զիլինկիրեան: Ծխական խորհուրդի այս առաջարկը որ երկրորդուած էր Պրն. Էլմասեանի կողմէ, այս հարցում եւ պատասխաններէ վերջ, բուէարկութեան դիմեց, առաջարկուեցաւ ՍԻԿ. Ունճեանի կողմէ որպէսզի բաց բուէարկութեամբ որոշումի մը հասնուի, այս առաջարկը երկրորդուեցաւ Պրն. Ս. Ատուրեանի կողմէ, ձեռնբաց բուէարկութեան արդիւնք, ծխական խորհուրդի վերոյիշեալ առաջարկը ընդունուեցաւ ժողովականներու 94 այո եւ 6 ոչ (1 ոչը Պրն Հայկ Միսաբեանի) բուէներով:

ՄՆԱՅՈՒՆ ՀՈՎԻՒ

Ատենապետ Ս. Զիլինկիրեան: Ժողովին ներկայացուց Թորոնթօի գաղութին մէկ տարիէ աւելի մնայուն հովիւի մը պակասը, Թորոնթօ գաղութն ներս, այս պակասը նիւ Եորքի առաջնորդարանի կողմէ կը հոգացուէր արժամեայ կղերականներ ղրկելով որ մեծապէս կը գնահատուէր ծխական խորհուրդի եւ Թորոնթօյի գաղութին կողմէ, բայց այս ձեւը կը մատնէր մեզ նիւթական եւ բարոյական դժուարութիւններու: Ծխական խորհուրդը մի բանի անգամներ դիմած էր, բաղաժ 6 ամիս հիւրաբար գտնուող Եղիշէ Ժ. Վրդ. Կիզիրեանի, որպէսզի ընդունի եւ ստանձնէ Եկեղեցւոյս մնայուն հոգեւոր հովիւի պաշտօնը, բայց, Հայր Կիզիրեանը չէ կրցած ընդունիլ իր անձնական պատճառներով:

Ատենապետ Պրն. Ս. Չիլինկիրեան շարունակելով ըսած է թէ ծխական խորհուրդը մօտեցած է քաղաքս հիւրաբար գտնուող Հայր ժիրայր Թաշճեանի եւ առաջարկած է որպէսզի ընդունի եկեղեցւոյս հոգեւոր Հովիւի պաշտօնը, գոնէ մէկ կամ երկու տարուայ համար, նկատի ունենալով որ հայր սուրբը երկար տարիներ աշխատած է Թորոնթոյի մէջ եւ ինքը յարմար կղերականն է մեր ծրագրին իրականացման համար: Հայր ժիրայրը իր հաւանութիւնը տուած է, պայմանաւ որ Թեմիս Առաջնորդ Թորգոմ Արք. Մանուկեան վաւերացնէ եւ հրահանգէ զինքը այս պաշտօնին համար, նոյնպէս նաեւ Պրն. Թորգոմ Զապունեան իբր Թեմական Պատգամաւոր Ս. Երրորդ. Եկեղեցւոյ խօսք առնելով ըսաւ թէ ինքը խօսած է Հայր Շնորհք Ժ. Վրդ. Գասպարեանի հետ որ ժամանակէ մը ի վեր Մոնթրէալ կը գտնուէր եւ առաջարկած է Հայր Գասպարեանի որ ընդունի Թորոնթօի ծուխի մնայուն հովիւի պաշտօնը, բայց հայր Գասպարեան մերժած է, ըսելով որ ինքը պաշտօնով Պոլիս կը գտնուի իրեն համար դժուար պիտի ըլլայ տեղափոխուիլ դէպի Թորոնթօ:

Վերոյիշեալ բացատրութիւններէ յետոյ Ատենապետ Պրն. Ս. Չիլինկիրեան ժողովին ներկայացուց ծխական խորհուրդի հետեւեալ առաջարկը.-

Ծխական խորհուրդս կառաջարկէ այս ժողովին որպէսզի վստահութեան քուէ տայ Հայր ժիրայր Վրդ. Թաշճեանի իբր մնայուն հովիւ Թորոնթօ գաղութին եւ ապա ծխական խորհուրդը պիտի դիմէ Առաջնորդ Սրբազան Հօր ստանալու համար իր խորհուրդը եւ իր յարկին վաւերացումը:

Ծխական խորհուրդին այս առաջարկին եղան գանազան հարցումներ թելադրանքներ:

Պրն. Հրաչ Պոյաճեան: Կը թելադրեմ որ այս ժողովի ներկայ անդամներէ ընտրուած յանձնախումբ մը կազմուի եւ Առաջնորդ Սրբազան Հօր ներկայանայ եւ բացատրէ մեր գաղութին կղեր մը ունենալու անհրաժեշտութիւնը:

Պրն. Ամբակումբան: Ծխական խորհուրդը պէտք է դարձեալ մօտեայ Հայր Եղիշէ Կիզիրեանի:

Պրն. Հրանդ Սուլին: ԵՍ իբր Թեմական Պատգամաւոր խօսած եմ Հայր Կիզիրեանի հետ, ինքը թելադրած է որ եթէ երկրորդ կղերական մը գտնուի ինքը կրնայ մնալ Թորոնթօ, եւ ապա վիճակը մեզի կը մղէ նիւթական յաւելեալ ծախսի մը եւս:

Պրն. Ս. Ատուրեան: Այս գաղութը պէտք է երկու կղերական ունենայ:

Պրն. Վ. Վարդանեան: Այս ժողովէն 2 անձեր նշանակուի որոնք աշխատին եւ գտնան կղերականներ որոնք պիտի փափաքէին պաշտօնավարել եւ առաջարկեց որ ծխական խորհուրդի այս առաջարկը յետաձգուի եւ դարձեալ վերատեսութեան ենթարկուի տարեկան Ընդհանուր անդամական ժողովին որ տեղի պիտի ունենայ Փետրուար ամսուայ մէջ:

Առաջարկուեցաւ Պրն. Հրաչ Պոյաճեանի կողմէ, երկրորդուեցաւ Պրն. Վարդանեանի կողմէ 2եռնքաց քուէարկութեամբ արդիւնք 56 Այո, 19 ոչ այս ձեւով ծխական խորհուրդի առաջարկը յետաձգուեցաւ:

Պրն. Ժան Յովակիմեան: Արքան որ ծխական խորհուրդի առաջարկը յետաձգուած է կրնայ ինքը առաջարկ բերել այս ժողովին որպէսզի դարձեալ մեծամասնութեան քուէով վերատեսուի ծխական խորհուրդի առաջարկը, օրուայ ղատաւոր Պրն. Մատաթ Յ. Մամուրեան ըսաւ թէ օրինական է Պրն. Յովակիմեանի առաջարկը ըստ ԲԻՊԸԲՍ ԲՈԼԼԻ:

Պրն. Հէրի Արթինեան; իօսք առնելով ըսաւ թէ, ես ալ երկար ժամանակ ծխական
խորհուրդի մէջ եղած եմ եւ զիտեմ եւ կը զգամ դժուարութիւնները ծխական
խորհուրդին, որոնք իրենց ժամանակը եւ աշխատանքը կը բերեն այցելու հովիւ
գտնելու համար եւ ծխական խորհուրդի այս առաջարկը որ ժողովին կողմէ
յետաձգուեցաւ լուծում մը չի պիտի ըլլայ այս հարցին:

Պրն. Ժան Յովակիմեան, առաջարկեց որ, այս ժողովը յետաձգելու որոշումը
չեղեալ նկատէ եւ վստահութեան քուէ տայ: Այս առաջարկը երկրորդուեցաւ
Պրն. Ռոտովֆ Զարբէի կողմէ: Զեռնբաց քուէարկութեան արդիւնք 56 այո եւ
18 ոչ: Յետաձգուած ծխական խորհուրդի առաջին առաջարկը դարձեալ ներկայացաւ
իբր սեղանի նիւթ: Ատենապետ Պրն. Ս. Զիլինկիրեան դարձեալ կրկնեց ծխական
խորհուրդի առաջարկը առանց փոփոխութեան եւ ժողովը ձեռնբաց քուէարկութեամբ
61 Այո եւ 14 ոչ եւ 2 ձեռնպահ քուէով ընդունեց ծխական խորհուրդի առաջարկը:


Ժողովը փակուեցաւ ժամը 10:30-ին:

Ատենապետ



Սարգիս Զիլինկիրեան

Ատենադպիր



Թորգոմ Զապունեան